«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Քալաշյան Ս.Ա._____
«23» հունիսի 2026 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ՝ դասախոս Սարկիսով Հ.Ա.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Ազգային անվտանգության իրավական հիմունքները

Մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՈՏԱՑԻԱՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության առջեւ ծառացած մարտահրավերները, որոնք իրենց բնույթով գոյաբանական պայքարի ասպեկտներ ունեն՝ անհրաժեշտ է, որ ապագա մասնագետները կարողանան, իրենց մասանագիտական ուղղվածությունների համատեքստում, ոչ միայն համադրեն, այլեւ՝ գիտակցեն Ազգային անվտանգության հիմնախնդիրները:

«Ազգային անվտնագության հիմունքները»՝ Ազգային անվտնագության գիտական եւ գործնական հիմքերի համադրությամբ համակարգ է, որը նպաստելու է ապագա մասնագետի՝ Ազգային անվտնագության վերաբերյալ իմացությունների, հմտությունների եւ ունակությունների ձեւավորմանը իրավաբանական տարբեր ոլորտներում գործունեություն ծավալելու նպատակով: «Ազգային անվտնագության հիմունքները» դասընթացը ենթադրում է ինչպես ընդհանուր սկզբունքների ուսումնասիրություն, որոնց գիտակցված տիրապետումն Ազգային անվտանգության համատեքստում ապահովելու է ապագա մասնագետի, սեփական գործունեության գրագետ կազմակերպումը, տարբեր հարթություններում յուրաքանչյուր գործունեության, գործողության եւ/կամ անգործության համադրում Ազգային անվտանգության հետ, այնպես էլ գործնական հմտություններ (գրավոր եւ բանավոր խոսքի զարգացմանն ուղղած գործնական աշխատանքներ եւ այլն), որոնք ուղղված են արդեն առանձին մասնագիտացումների համատեքստում մասնագիական ուղղությունների եւ Ազգային անվտնագության հիմնախնդիրների համադրմանը, համեմատական վերլուծությանը եւ այլնին: Դասընթացի շրջանակներում խնդիր է դրված՝ ուսանողի մոտ ձեւավորել Ազգային անվտանգության հիմունքների, հիմնախնդիրների ամբողջական պատկերացում, ինչպես նաեւ նեղ մասնագիտական գործունեության առջեւ դրված գիտական եւ գործնական հիմնախնդիրները համադրել եւ կարողանալ լուծել Ազգային անվտանգության հիմնախնդիրների համատեքստում:

Առարկայի նպատակն է: «Ազգային անվտանգության հիմունքներ» ակադեմիական դիսցիպլինի ուսումնասիրությունը առանձնահատուկ նշանակություն եւ կարեւորություն ունի յուրաքանչյուր իրավաբան-ուսանողի համար եւ նպատակ ունի զարգացնել

ուսանողների կարողությունները՝ վերլուծելու եւ համեմատելու Ազգային անվտանգության հիմունքները, հայեցակարգերը, ինչպես նաեւ ուսումնասիրելու անվտանգության տարբեր ասպեկտները գլոբալ եւ տեղական մակարդակներում՝ ժամանակակից սոցիալ-քաղաքական փոփոխությունների համատեքստում:

Առարկայի խնդիրներն են: «Ազգային անվտանգության հիմունքները» ակադեմիական դիսցիպլինի հիմնական խնդիրներն են.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԼՈՒԾՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԱՅԱԼ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

- Ըստ մասնագիտական կրթական ծրարգրի ուղղվածության Ազգային անվտանգության հայեցակարգի վերաբերյալ գիտելիքների ձեռք բերումը:
- Ըստ մասնագիտական կրթական ծրարգրի ուղղվածության ուսանողի առջեւ ծառացած խնդիրներ լուծելը՝ Ազգային անվտնագության համատեքստում, համադրել այդ խնդիրները, ինչպես նաեւ գիտակցել վերջիններիս հետեւանքները:
- Հաշվի առնելով Ազգային անվտանգության հայեցակարգի մշակման բարդությունը, կարեւորությունն ու բազմաշերտությունը՝ անհրաժեշտ է խորացնել գիտելիքները նաեւ իրավաընկալման հայեցակարգերում:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ, ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈԱՇ-Ի ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ:

իմանա՝

- Ինչ են իրենցից ներկայացնում «Ազգային անվտնագություն», «Ազգային անվտնագության հայեցակարգ» եզրույթենը,
- «Ազգային անվտանգության ռամավարության» նորմատիվ բնույթը, տեղը նորմատիվ իրավական ակտերի հիերարխիայում,

- Արցախի Հանրապետության, Հայոց ցեղասպանության ճանաչման եւ Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցու տեղի ու դերի վերաբերյալ ընդունված «Ազգային անվտնագության ռազմվարություն»-ներում ամրագրված կարգավիճակների տարբերությունները,
- Հայաստանի Հանրապետության «Ազգային անվտնագության ռազմավարության» 2007 եւ 2020 թվականների առանցքային տարբերությունները՝ ըստ մասնագիտական կրթական ծրարգրի ուղղվածության:

կարողանա՝

- ինքնուրույն եւ համակողմանիորեն կիրառել մասնագիտական գիտելիքները՝ նոր եւ անծանոթ իրադրություններում, տեսական եւ գործնական իրավական հիմնախնդիրների, հատկապես ազգային անվտնագության հիմնախնդիրների լուծման համար,
- ինքուրույն գտնել, դասկարգել եւ համակողմանի ու համակարգված մոտեցմամբ, փաստարկված մեկնաբանել օրենսդրական կամ այլ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է մասնագիտացման ոլորտում՝ ազգային անվտանգության խնդրի լուծման համար,
- ինքնուրույն օգտագործել գիտական հետազոտության մեթոդները ՝ մասնագիտական գործունեություն ծավալելիս եւ ազգային անվտանգության համատեքստում անհրաժեշտ հետազոտություններ իրականացնելիս,
- իրավաստեղծման, իրավակիրառման եւ մեկնաբանման ժամանակ հասկանալ քաղաքական, սոցիալական, տնտեսական, պատմական, անձնային եւ հոգբենական գործոնները, որոնք կարող են առաջ քաշել ազգային անվտնագության հիմնահարցեր:

ունակ լինի՝

- աշխատել թիմում, ավելին՝ այն ղեկավարելու,

- մասնագիտական գործունեության ընթացքում բացահայտելու Ազգային անվտանգության հիմնախնդիրները, գնահատելու դրանք, ինչպես նաեւ առաջ քաշելու ճիշտ լուծումներ,
- ինքնուրույն ծավալելու լիարժեք մասնագիտական գործունեություն՝ որոնք կուղեկցվեն Ազգային անվտանգության հիմնախնդիրների համադրմամբ,
- աշխատելու այնպիսի միջավայրում, որտեղ մասնագիտական խնդիրները կկարողնա լուծել՝ հաշվի առնելով Ազգային անվտանգության հիմնախնդիրները:

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՂՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ

ԴԱՍԸՆԹԱՑԸ ՆԵՐԱՌՎԱԾ Է ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ «ԸՆՏՐՈՎԻ ԱՌԱՐԿԱՆԵՐ» ՄԱՍԻՆ՝ 1 ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿՐԵԴԻՏ (36 ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԺԱՄ) ԱՇԽԱՏԱՏԱՐՈՒԹՅԱՄԲ, ՈՐԻՑ 8 ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԺԱՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ: ԴԱՍԸՆԹԱՑԸ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ 4-ՐԴ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	ԸՆԴԱՄԵՆԸ, ԱԿԱԴ. ԺԱՄԵՐ
1. ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝	**36**
1.1. ԼՍԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝	**16**
1.1.1. ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**8**
1.1.2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝	**8**
1.1.2.1. ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	
1.2. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝	

1.2.1. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ	
1.2.2. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՅԼ ՏԵՍԱԿՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝(ՆՇԵԼ)	
1.2.2.1. ԳՐԱՎՈՐ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	
1.2.2.2. ԷՍՍԵ և ՌԵՖԵՐԱՏՆԵՐ	
ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՈՒՄ (ՔՆՆՈՒԹՅՈՒՆ, ՍՏՈՒԳԱՐՔ)	**ստուգարք**

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԻ ԲԱՇԽՈՒՄ (ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԺԱՄԵՐՈՎ) ԸՍՏ ԹԵՄԱՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

ԱՌԱՐԿԱՅԻ ԲԱԺԻՆՆԵՐԸ և ԹԵՄԱՆԵՐԸ	ԸՆԴԱՄԵՆԸ	ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԳՈՐԾՆԱԿԱՆ / ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ
1	2=3+4	3	4
ԹԵՄԱ 1. Ազգային անվտանգության համակարգը	2	1	1
ԹԵՄԱ 2. Ազգային անվտանգության սպառնալիքները	2	1	1
ԹԵՄԱ 3. Ազգային անվտանգության նորմատիվ իրավական ապահովումը	2	1	1
ԹԵՄԱ 4. Ազգային անվտանգության առանձին տեսակների ապահովման հիմքերը	2	1	1
ԹԵՄԱ 5. Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ապահովման քաղաքականությունը	2	1	1
ԹԵՄԱ 6. Հայաստանի Հանրապետության իրավական անվտանգության հայեցակարգ (նախագիծ)՝ որպես ազգային անվտնագության	2	1	1

առանցքային բաղադրիչ			
ԹԵՄԱ 7. Հայաստանի Հանրապետության Ազգային անվտնագության ռազմավարությունների համեմատակ վերլուծություն	**4**	**2**	**2**
ԸՆԴԱՄԵՆԸ	**16**	**8**	**8**

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն

«Ազգային անվտնագություն» ակադեմիական դիսցպլինի առարկայի եւ օբյեկտի ներկայացում, վերջինիս տեղն ու դերը իրավաքաղաքական համակարգում: Անդրադառնալ նաեւ, թե ի՞նչ մոտեցումներ էին որդեգրել Ազգային անվտանգության ռազմավարությունները՝ Արցախյան հիմնախնդրի լուծման վերաբերյալ:

ԹԵՄԱ 1. Ազգային անվտանգության համակարգը

Ազգային անվտանգության համակարգը: Ազգային անվտնագության համակարգի նպատակները, հիմնական բաղադրիչները, կառուցվածքը, գործառույթները:

Ազգային անվտանգության տեսակները: Անհատը, հասարակությունը և պետությունը որպես ազգային անվտանգության օբյեկտ.

Ազգային անվտանգության ռազմավարությունը՝ որպես ազգային անվտանգության ապահովման հիմնարար փաստաթուղթ:

Ազգային անվտանգության ապահովման պետական ենթահամակարգ. Ազգային անվտանգության ապահովման ոչ պետական ենթահամակարգ.

Արտասահմանյան երկրների Ազգային անվտանգության հայեցակարգերը՝ ԱՄՆ, Միացյալ Թագավորություն, ԵՄ անդամ պետություններ, ՌԴ, Հարավային Կովկաս:

ԹԵՄԱ 2. Ազգային անվտանգության սպառնալիքները

«Սպառնալիք» եզրույթի էությունը: Սպառնալիքների աղբյուրները: Հայաստանի Հանրապետության Ազգային անվտնագության սպառնալիքները:

Հայաստանի Հանրապետության Ազգային անվտնագության արտաքին և ներքին սպառնալիքների հիմնական աղբյուրները:

Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին անվտանգությանն ուղղված իրական սպառնալիքներ:

Ահաբեկչությունն ու արմատականությունը՝ որպես Հայաստանի Հանրապետության Ազգային անվտնագության սպառնալիք:

ԹԵՄԱ 3. Ազգային անվտանգության նորմատիվ իրավական ապահովումը

Միջազգային իրավունքը որպես միջազգային անվտանգության ժամանակակից համակարգի հիմք: Միջազգային պայմանագրերը և միջազգային կազմակերպությունները միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման ոլորտում և դրանցում Հայաստանի Հանրապետության մասնակցության փորձը:

Ազգային անվտանգության ապահովման սահմանադրական հիմքերը: Ազգային անվտանգություն և մարդու իրավունքներ: Ազգային անվտանգության բնագավառը կարգավորող օրենսդրություն:

Ազգային անվտանգության մարմինների համակարգ: Ռեետական իշխանության լիազորությունները ազգային անվտանգության ապահովման բնագավառում:

ԹԵՄԱ 4. Ազգային անվտանգության առանձին տեսակների ապահովման հիմքերը

Պետական և հասարակական անվտանգության ապահովման նպատակները, սկզբունքները, սուբյեկտներն ու օբյեկտները, հասարակական և քաղաքական անվտանգության տեսակները:

Հոգևոր անվտանգություն: Հայաստանի Հանրապետության հոգևոր անվտանգությանը և մշակութային ինքնության, ինքնիշխանության ապառնալիքները: Ավանդական, հոգևոր և բարոյական արժեքների, մշակույթի և պատմական հիշողության պաշտպանությունը: պետական լեզվական քաղաքականություն և Հայաստանի Հանրապետության լեզվական անվտանգության ապահովում:

Էթնո-դավանական հակամարտությունները՝ որպես ազգային անվտանգության սպառնալիք:

Ռազմական անվտանգություն: Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունը ազգային պաշտպանության և ռազմական զարգացման ոլորտում: Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության առանձնահատկությունները արդի աշխարհաքաղաքական փուլում. Հավաքական անվտանգության հայեցակարգը միջազգային իրավունքում: Հավաքական անվտանգության տարածաշրջանային կազմակերպություններ (ՀԱՖԿ, ՆԱՏՕ և այլն):

Էներգետիկ անվտնագություն: Էներգետիկ աշխարհաքաղաքականության և էներգետիկ անվտանգության տեսական-մեթոդաբանական հիմքերը:

Տեղեկատվական անվտանգություն: Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության սկզբունքները, նպատակները, սպառնալիքները և դրանց հակազդումը: Կիբերահաբեկչություն: Միջազգային համագործակցություն տեղեկատվական անվտանգության ապահովման համար:

Տնտեսական անվտանգություն: Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության սկզբունքները, նպատակները, սպառնալիքները և դրանց հակազդումը:

Անձնական անվտանգություն: Ազգային անվտանգության հայեցակարգ և էություն՝ ֆիզիկական և հոգևոր անվտանգություն, անչափահասների անվտանգությունը անձնական անվտանգության համակարգում:

ԹԵՄԱ 5. Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ապահովման քաղաքականությունը

Ազգային անվտանգության համակարգում կառավարման գործընթացները: Ազգային անվտանգության վրա ազդող պատճառների և գործոնների բացահայտումը: Ազգային ռազմավարական առաջնահերթությունների իրականացման ընթացքում առաջադրված նպատակներին հասնելու և ազգային անվտանգության խնդիրների

լուծման համար անհրեժեշտ գործիքակազմը: Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ապահովման ուժերը և միջոցները:

Հայտնաբերված սպառնալիքներին դիմակայելու համար համակարգերի հայեցակարգային և նախագծային մոդելավորումը: Պաշտպանական համակարգի մոնիտորինգի և վերահսկման մեթոդները:

ԹԵՄԱ 6. Հայաստանի Հանրապետության իրավական անվտանգության հայեցակարգ (նախագիծ)՝ որպես ազգային անվտնագության առանցքային բաղադրիչ

Հայաստանի Հանրապետության իրավական անվտանգության հայեցակարգում (նախագիծ) ներկայացվում են իրավական անվտանգության սահմանադրական երաշխիքները, Հայաստանի Հանրապետությունում իրավական անվտանգության երաշխավորման հիմնական խնդիրները եւ նպատակները, առաջնահերթությունները, ներքին եւ արտաքին սպառնալիքները, երկրի իրավական անվտանգության մարտահրավերներին դիմակայելու գործում հանրային իշխանության մարմինների անելիքները:

ԹԵՄԱ 7. Հայաստանի Հանրապետության Ազգային անվտնագության ռազմավարությունների համեմատակ վերլուծություն

Ուսումնասիրվելու եւ համադրվելու են Հայաստանի Հանրապետության ազգային անվտնագության ռազմավարությունների կառուցվածքը, փաստաղթղերի ընդունման նպատակները եւ ներածությունները, ինչպես նաեւ տվյալ փաստաթղթերին կից ուղերձները՝ մի կողմից ՀՀ վարչպետի եւ ազգային անվտնագության ռազմավարության նախագծի մշակման հանձնաժողովի նախագահի (2007 թվական), մյուս կողմից էլ՝ ՀՀ վարչապետի (2020 թվական): Քննարկվելու են դրանց առանցքային նմանություններն ու տարբերությունները:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

Հիմնական՝

1. «Պետության եւ իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ»/Հեղ. խումբ; Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան.-3-րդ լրամաշակված հրատ. -Եր.: «Լուսաբաց հրատարակչատուն», 2018. – 688:
2. Кардашова, И. Б. Основы теории национальной безопасности: учебник для вузов / И. Б. Кардашова. — 3-е изд. — Москва: Издательство Юрайт, 2023. — 334 с. — (Высшее образование). — ISBN 978-5-534-15789-5. — Текст: электронный // Образовательная платформа Юрайт [сайт]. — URL: https://urait.ru/bcode/509729
3. Зеленков, М.Ю. Основы теории национальной безопасности: учебник для студентов вузов / М.Ю. Зеленков. — М.: ЮНИТИ-ДАНА, 2017.- 295 с. - ISBN 978- 5-238- 02801-9. - Текст: электронный. - URL: https://znanium.com/catalog/product/1028460.
4. Овчинников, А. И. Основы национальной безопасности: учебное пособие / А. И. Овчинников, А. Ю. Мамычев, П. П. Баранов. — 2-е изд. — Москва: РИОР: ИНФРА-М, 2019. — 224 с. — (Высшее образование). — ISBN 978-5-369-01592-6. — URL: https://znanium.com/catalog/document?id=342017.
5. Савицкий, А.Г. Национальная безопасность. Россия в мире: учебник для студентов вузов / А.Г. Савицкий. — М.: ЮНИТИ-ДАНА, 2017. - 463 с. 5-238-02307-6. - Текст: электронный. - ISBN 978- - URL: https://znanium.com/catalog/product/1028891.
6. «Ազգային անվտնագության հիմնախնդիրենրը»: Դասախոսություններ1/ Վ.Կ. Աթոյան. - Եր.: «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014, 154 էջ:

Լրացուցիչ գրականության ցանկ՝

1. «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության եւ նորմատիվ իրավական ակտերի կոլիզիաները», Արթուր Ղամբարյան, Հայ-ռուսական համալսարանի Լրաբեր, 3(36)2020:
2. «Երկրի իրավական անվտանգության երաշխավորումը որպես սահմանադրական ժողովրդավարության հաստատման կարեւոր գրավական», Գագիկ Հարությունյան,
3. ՀՀ ՖՆ Դրաստամատ Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի Ռազմագիտական հանդես 2-3 (52-53) 20072, «Ազգային անվտանգությունը՝ կայուն ժողովրդավարական զարգացմամբ»:

4. «Հայաստանի հին եւ նոր Ազգային անվտանգության ռազամվարությունների համեմատական վերլուծություն»3, Տիգրան Գրիգորյան, «Իրազեկ քաղաքացիների միավորում»:
5. «Նոր մոտեցումներ ՀՀ ազգային անվտանգության խնդրին», Երեւանի ֆետական Համալսարան Սահմանադրական Տնտեսագիտության Գիտավերլուծական Կենտրոն – 2022 թվական:
6. Давтян В. Интеграция в международные транспортные коридоры как главный вызов транспортной безопасности Армении // Армянский политологический журнал. 2015. № 2, с. 129-146.
7. Давтян В. Транспортно-логистическая ситуация на Южном Кавказе: железнодорожные войны // Мировая экономика и международные отношения. 2017. Т. 61, № 7, с. 93-100.
8. Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, Աղայան Ա., Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2002, էջ 8-15:
9. «Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի կազմի եւ կառուցվածքի իրավաքաղաքական հիմնախնդիրները»4, Հրանտ Սարկիսով, ՀՀ ՍԴ տեղեկագիր 3(107)2022, էջ 129
10. «Անվտնագության խորհրդի նախագահը խորհրդարանական կառավարման հանրապետություններում. Հանրապետության նախագա՞հ, թե՞ վարչապետ՝ իրավաքաղաքական հիմնախնդիրները», Հրանտ Սարկիսով, «Արդարադատություն» հանդես, 2023 Հուլիս 1(58), էջ 40
11. «Լաութսին եւ այլք ընդդեմ Իտալիայի»6 Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի Մեծ պալատի որոշումը (Grand Chamber: Case of Lautsi and others v. Italy):

Նորմատիվ իրավական ակտեր՝

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

2. ՀայաստանիՀանրապետությանազգային անվտնագության ռազմավարություն՝ ընդունված 2007 թվականին:
3. ՀայաստանիՀանրապետությանազգային անվտնագության ռազմավարություն՝ ընդունված 2020 թվականին:
4. National Security Act of 19477 (USA) («Ամերիկայի Միացյալ Նահանգների Ազգային անվտնագության մասին օրենք»):
5. Հայաստանի Հանրապետության իրավական անվտանգության հայեցակարգ (նախագիծ):
6. Անվտանգության խորհրդի կազմավորման եվ գործունեության մասին օրենք
7. Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին օրենք:
8. Պետական սահմանի մասին օրենք:
9. Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին օրենք:
10. Ահաբեկչության դեմ պայքարի մասին օրենք:
11. Ազգային անվտանգության մարմինների մասին օրենք

Էլեկտրոնային ռեսուրսներ՝

1. http://parliament.am ՀՀ ԱԺ
2. https://www.gov.am/am/structure/ ՀՀ Կառավարություն
3. https://www.primeminister.am/hy/ ՀՀ Վարչապետ
4. https://www.seco.am ՀՀ Անվտնագության խորհրդի գրասենյակ
5. https://www.mfa.am/hy/ ՀՀ Արտաքին գործերի նախարարություն
6. https://www.sns.am/hy ՀՀ ԱԱԾ
7. https://odkb-csto.org ՀԱՊԿ
8. https://www.nato.int ՆԱՏՕ
9. https://www.osce.org ԵԱՀԿ

Հարցեր՝ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար

Հարցաշար՝

1. Ի՞նչ է նշանակում «ազգային անվտնագություն» եզրույթը: Ե՞րբ է այն առաջին անգամ գործածվել, ո՞ւմ կողմից եւ ի՞նչ համատեքստում:
2. Որո՞նք են ազգային անվտանգություն հասկացության հիմնական սահմանումները:
3. Ազգային անվտնագության ապահովման համակարգը՝ էությունը, նպատակները, խնդիրները:
4. Հայաստանի Հանրապետության Ազգային անվտնագության ապահովման սկզբունքները:
5. Որո՞նք են Հայաստանի Հանրապետության Ազգային անվտնագության բնագավառում գործող հիմնարար փաստաթղթերը:
6. Ազգային անվտնագության ռազմավարությունը ի՞նչ իրավական բնույթ (արժեք) ունի:
7. Ինչպե՞ս պետք է լուծել Ազգային անվտանգության ռազմավարության եւ այլ իրավական ակտերի միջեւ առաջած կոլիզիաները:
8. Ի՞նչ է իրենից ներկայացնում Անվտանգության խորհուրդը: Ի՞նչ կառուցվածք ունի Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհուրդը:
9. Ի՞նչ կառուցվածք ունեն մինչեւ այժմ ընդունված Ազգային անվտանգության ռազմավարությունները:
10. Ի՞նչ է ազգային շահը եւ ինչպե՞ս է այն դասակարգվում:
11. Հայոց ցեղասպանություն. ե՞րբ է այն տեղի ունեցել (իրավաքաղական պատմություն): Ցեղասպանության ճանաչման ուղղված գործունեությունը:
12. Ո՞ր պետությունն է առաջինը ճանաչել Հայոց ցեղասպանությունը, մինչեւ այժմ քանի՞ պետություն է ճանաչել: Ի՞նչ նորմատիվ իրավական ակտերով են ճանաչվել Հայոց ցեղասպանությունը:

13. Ինչպե՞ս է կարգավորվում Պետության եւ Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները: Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցու տեղն ու դերը Հայաստանի Հանրապետության կյանքում:
14. Ի՞նչ է նշանակում ազգային եկեղեցի: Լաութսին եւ այլք ընդդեմ Իտալիայի Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի Մեծ պալատի որոշումը:
15. Պետություն–Եկեղեցի փոխհարաբերության համատեքստում ինչպիսի՞ պետություն է Հայաստանի Հանրապետությունը: Մեկնաբանել ՀՀ Սահմանադրության 17, 18-րդ հոդվածները:
16. Ի՞նչ է նշանակում Ազգային անվտնագության սպառնալիք: Թվարկեք և ներկայացրեք մի քանիսը:
17. Որոնք են Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ապահովման արտաքին և ներքին սպառնալիքները, վերջիններիս հիմնական աղբյուրները:
18. Ի՞նչ է ահաբեկչությունը: Ինչպե՞ս հակազդել:
19. Որո՞նք են իրավական հայեցակարգ ընդունելու անհրաժեշտությունը: Ի՞նչ հիմնական նպատակներ է հետապնդում վերջնիս նախագիծը:
20. Ի՞նչ է նշանակում Հայաստանի Հանրապետության հոգևոր անվտնագությունը: Ի՞նչ սոցիալ իրավական խնդիրներ են առկա:
21. Էներգետիկ անվտնագություն. ի՞նչ է սա, ինչպե՞ս ապահովել այն:
22. Տեղեկատվական անվտնուգույն. ի՞նչ է սա, ի՞նչ արդի հիմնախնդիրներ են առկա:
23. Տնտեսական անվտնագություն. ի՞նչ է սա և ինչպե՞ս լուծել վերջինից բխող հիմնախնդիրները:

Խնդիրներ

Խնդիր 1:

ԱՄՆ ազգային անվտանգության հայեցակարգի առանցքային պնդումներից մեկն այն է, որ ԱՄՆ ազգային շահերը վեր են միջազգային իրավունքից:

Առաջադրանք:

Վերլուծեք այս փաստը և ներկայացրեք վերջինիս ազդեցությունը միջազգային անվտանգության համակարգի վրա:

Խնդիր 2:

Հասարակական հարաբերությունների արդի պայմաններում հաճախ իրավաքաղաքական խոսույթ է այն, որ բնիկ ազգության կենսական շահերը պետք է լինեն պետության ազգային շահերի համակարգային տարր:

Առաջադրանք:

Վերլուծեք, արդյո՞ք ճիշտ է տվյալ պնդումը՝ ներկայացնելով «ազգություն», «ազգ» և «ժողովուրդ» կատեգորիաների փոխհարաբերությունները:

Խնդիր 3:

Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության 2020 թվականի ռազմավարությունը քննարկվել և իգիտություն է ընդունվել Անվտանգության խորհրդի նիստի ընթացքում, այնուհետև հրապարակվել է Հանրապետության Վարչապետի և Անվտնագության խորհրդի պաշտոնական կայք-էջերում:

Առաջադրանք:

Վերլուծել և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության 2020 թվականի ռազմավարության տեղն ու դերը Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի համակարգում:

Ստուգումների անցկացման ձեւը եւ գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում.

Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր եւ տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

Ելույթներ ըստ թեմայի.

Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

Գնահատման չափանիշները՝ պատասխանի տրամաբանական կառուցում, տեսական եւ կիրառական գիտելինքների համադրում, օրինակներ բերելու ունակություն, տեսակետների պատճառաբանվածություն:

Ստուգարք.

Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները եւ ելույթների վերլուծության ունակությունը ստացված գիտելինքերի արդյունքում: